




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ ԺԷ.

1884

ՏԱՐԻ ԺԷ. ՅՈՒՆԻՎ.ՍԲ 31.

ՆՈՐ ՏԱՐԻ.

Անցաւ 1883 թիւը, և մենք ուրախ սրտով ողջունեցինք 1884 թուականի մուտքը: Հինը իւր գործերի լաւ և վատ հետեւանքներով իբրեւ խորշումեալ ծերունի կնքեց իւր շրջանը: Անցեալ թուականի ինչ ինչ գործողութեանց ուրախաւիթ և տխուր տպաւորութիւնները առ ժամանակ մի անմոռանալի կրմնան մեր համար, և մենք այդ տպաւորութեան առիկ կը յայտնենք մեր կարծիքը խօսակցութեամբ, որ շուտով կրմնուացունեն կամ կըղաւնան բերանացի և գրաւոր յիշատակարաններ, որոնցով ապագան կրկազմէ տարեգրութիւն ժամանակակից պատմութեան շէնք կառուցանելու:

Սկսելով Նոր տարին, մենք հրապուրուած նորա մանկական անմեղ ժպիտով, նոյնչափ անմեղութեամբ և խնդամիտ ուրախութեամբ շնորհաւորումենք դորա լոյս աշխարհ Գայր, բայց շուտով կ'անցնի Նոր տարու այդ մանկական անմեղութիւնը, շուտով անյ-

նող օրերը իրանց հետքերով ակօսներ կըձգեն այդ նորամանուկի դէմքի վերայ, և կնճիռները երեւան կըհանեն այն բոլոր մտախոհութիւնները, որոնք հետեանք լինելով անցեալին՝ պատճառ պէտք է դառնան ապագայի համար: Ճիշդ այդպէս է և մարդկանց կեանքը, որ սկսումէ շնորհաւորէքով ու խնդութեամբ. հետզհետէ անցնումեն օրերը, մանկութեան հետ անցնումէ զուարթութիւնն ու անմեղութիւնը. հոգսերը ակօսներ են ձգում դէմքի վերայ, մտահոգութեան կնճիռները յաջորդումեն անհոգ զուարթութեան և վերջապէս այդ կեանքն ևս կնքումէ իւր շրջանը առ ժամանակ մի անմոռաց թողնելով իւր հետեանքների տխուր կամ տրախառիթ ապաւորութիւնները:

Այսպէս ուրեմն մենք շնորհաւորումենք և մանկան ծնունդը և տարեմուտը, խնջոյքներ ենք պատրաստում, բարեմաղթութիւններ ենք անում. ինչպէս մանկան ծննդեան շնորհաւորէքի ժամանակ առ վայր մի չեն յիշում մանկան ապագայի համար հոգացողութիւնները, նոյնպէս և նոր տարունն է լինում: Մանկան ծնունդը սկիզբն է նորա երկրաւոր կեանքին, իսկ նոր տարունը՝ շարունակութիւն անցեալի. և մարդիկ նախ քան տարեմուտը, անցնող տարուայ հետ կնքումեն իրանց տարեկան գործողութեանց հաշիւը և առաջարկումեն զննելու ում հարկն է. — հին տարին նորին է յանձնում իւր հաշիւը, ստորագրեալը՝ իւր տիրոջը, իսկ ամեն մարդ՝ իւր խղճի դատաստանին:

Թէ պաշտօնական հաստատութիւնները և թէ ամեն մէկիս խիղճը Յունվարի մէկին իրանց դատաստանին յանձնուած ցուցակները չեն բաց անում, որպէս զի նոր տարու մուտքը և նորա ուրախառիթ շնորհաւորութիւնները մոռատանջութեան և հոգսերի դառնութեամբ չլիարակուին, մենք ևս երբ սկսումենք նոր տարու առիթով խօսել մեր ընթերցողների հետ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ անելով՝ չենք կամենում գրականութեան դատաստանին յանձնուած մատեանները զննել, որպէս զի մեր բարեմաղթութիւնները հոգսերով և դառնութեամբ վարակուած չը լինին:

Այս անգամ մեր ընթերցողներին կըբաւականացնենք նկարագրելով թէ ինչպէս ընդունեց Մայր Աթոռոյս Միաբանութիւնը նոր տարու մուտքը, թէ և այժմ այդ տեսակ նկարագրութիւնները մեծ հաճոյք չեն պատճառում ընթերցող հասարակութեան:

Անցեալ Դեկտեմբերի 31 ին, երեկոյեանը, հասարակաց սեղանա-
տանը սովորական ընթրիքը միաբանութեամբ վայելելուց յետոյ,
բոլոր միաբանները հաւաքուեցին Վեհարան, ուր պատրաստուած էր
կաղանդի սեղանը: Միաբանները ըստ իւրաքանչիւր աստիճանի խըմ-
բուեցին սեղանի շուրջը, Ամենապատիւ Տեղակալ Մակար Արքազան
Արքեպիսկոպոսը օրհնեց սեղանը և սկսուեց խնջոյքը: Նորին Արքազ-
նութիւնը իբրեւ Հայր այդ եղբայրական սիրով միացած միաբանու-
թեան՝ սկսեց խօսել, որի ամփոփումն որքան յիշումենք է.

— Ներկայ 1883 ամն գաղարեցաւ ի գործելոյ. նա փակեց կնքեց
իւր տարեգրութեան յիմակագրութեան տումարն, ուր արձանա-
գրուած է մեր անցեալն, և ահա մի քանի ժամից յետոյ պիտի տանէ
իւր զմեզ և թէ զտարեգրութեան տումարն յանձնել 1884 թուակա-
նին, որոյ առաջին օրն անուանիւմէ՝ Նոր տարի. ինչ է այդ Նոր
տարին և ինչ Նորա պաշտօնը. — Դա մի խորհրդաւոր անձնաւորու-
թիւն է, որ Նոր աշխուժիւ, Նոր եռանդեամբ և Նոր սիրով ոգևո-
րումէ զմեզ ի գործել յօգուտ մարդկութեան. դա մի նշանաւոր
օր է, որ մեր առաջն և մի Նոր, լայն և ընդարձակ ասպարէզ կրբա-
նայ առ ի գործել զբարիս: Աւրեմն սիրելի եղբարք, շնորհաւորե-
լով Ձեզ այդ Նոր օրն, Նոր աշխոյժն և Նոր եռանդն կը հրաւիրեմք
գործել այդ կենաց ասպարիզի մէջ այն, ինչ որ բարին է և հաճոյն
Աստուծոյ. գործենք, որ ինչ օգտակարն է մեծի Աթոռոյս և Հա-
հաւէտ. և վերջապէս գործեմք այն, որ ինչ վայելուչն է անուան և
համբաւոյ մեր բարեկրօնութեան:

Բայց յառաջ քան գործելն գոհութիւն և փառաբանութիւն
մատուցանենք Ամենազօր Արարչին՝ որ տակաւին պահպանէ զմեզ
և տայ կեանս և շունչ և զամենայն ինչ: Նորին Արքազնութեան
խօսքերը վերջանալիս, երգիչները սկսեցին եղանակել. —

« Երկինք և երկիր գոհանան զՔէն Տէր. արարածք ամենայն
քեզ երկիր պապանեն, և հրեշտակք ի բարձունս ազադակեն և
ասեն, ոգորմեա, զու ստեղծեր, մի կորուսաներ »:

« Երկինք երկնից և ջուրք, որ ի վերոյ քան զերկինս օրհնեցէք
զանուն Տեառն, զի նա ասաց և եղեն հրամայեաց և հաստատե-
ցան. և հրեշտակ »:

« Երկինք և երկիր հանապազ զՔեզ գովեն Բազաւոր փառաց,
Սերովբէք և Քերովբէք ի խոնարհ ունելով զգէմս իւրեանց և

միաձայն բարբառով աղաղակեն և ասեն. Սուրբ, Սուրբ, Սուրբ
Տէր զօրութեանց ։ ։

Ապա Միաբանութեան կողմից Գերապատիւ Տէր Մկրտիչ Արքապետ
Արքեպիսկոպոսը շնորհակալ եղաւ Տեղակալ Արքապետինց՝ Որ բարե-
մաղթութիւններ արեց միաբան եղբարցոյ համար, և երգեցիկները
սկսեցին երգել. « Քաղաւոր երկնաւոր, որ զթիւ սրբոց քոյ բարե-
գթութեամբ լցեր, զմիաբանութիւնս մեր օրհնեա. զի մի՞ ոք
օյտեալ ի բանտարկուէն ելցէ արտաքս ի կորստական բաղանիսն.
ճգնութեամբ սոցա մաղթեացուք զհաշտութիւն անձանց ։ ։

Ապա Արժ. Յուսիկ Վարդապետ գրաւոր ճառ կարդաց. այնու-
հետեւ եղան պատշաճաւոր զանազան բարեմաղթութիւններ՝ մէջ
ընդ մէջ զանազան երգերով։ Ազգիս և Մայր Աթոռոյս համար
եղած բարեմաղթութեան ժամանակ երգեցիկները երգեցին. « Եջ-
միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա. ձայնք հնչեցին սան-
դարամետք անդնդոց։ Տեսեալ զլոյս մեծ, Հայրապետին Գրիգորի,
պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքայի։ Եկայք շինեսցուք
սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաս-
տան աշխարհի ։ ։

Նորին Արքապետութիւն Ամենապատիւ Տեղակալ Հայրը հանգու-
ցեալ Հայրապետին հանգիստ և երկնից սուրբ արքայութիւն բա-
րեմաղթելով, մաղթեց երկնից արդար վիճակ այն անձին, որ ազ-
գային ընտրութեամբ պէտք է կոչուի ազգն ու եկեղեցին կառա-
վարելու։ Այս բարեմաղթութեան ձայնակից եղան միաբան եղ-
բարք պատշաճաւոր յարգանք. և կաղանդի այս հանգէտը վերջա-
ցաւ. « Ով Տէր Աստուած լուր մեր բարբառ, երգով՝ և սեղանի
օրհնութեամբ։ Բոլոր ժամանակ թագաւորումէր կրօնաւորական
կոչման յարմար պատշաճաւորութիւն. սեղանից վերկենալով, ա-
մենքը կարգաւ իբրեւ մի տան զաւակ համբուրելով Տեղակալ Արքա-
պետ Հօր աջը՝ ուրախ զուարթ միմեանց Նոր տարին շնորհաւորե-
լով՝ զուրս եկան Վեհաբանից։

Հետեւեալ օրը, Յունիարի մէկին Վաղարշապատու քահանայք,
առաջաւոր անձինք և զանազան դիւանատանց ծառայողները ա-
ռաւօտեան ժամերգութիւնից յետոյ նախ քան Ս. Պատարագի
սկսուիլը քսա սովորութեան փութացին շնորհաւորել Տեղակալ
Արքապետ Հօր Նոր տարին և նորա օրհնութիւնը ընդունել։

Վերջացնելով նկարագրութիւնս Արարատի Խմբագրութիւնը շր-
նորհաւորումէ տարեմուտը և՛ մազթումէ Աստուծուց զօրութիւն,
կարողութիւն և կեանք, որ ողջ առողջ կարողանանք մեր ան-
ցեալ վաստակոց արդիւնքը վայելել. կիսատ մնացած բարի գոր-
ծերի յաջող աւարտը տեսնել, նոր նոր բարի և օգտակար գործ
սկսել և յաջողութեամբ աւարտել: Տայ Աստուած որ ուրախ սրը-
տով ցամաք աչքով շատ այս տեսակ տարիներ անցկացնենք:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԷ:

Սիրելի մանուկներ: Յիսուսի Ծնունդը շնորհաւորելով այս ան-
գամ՝ Նորա ծննդեան պատմութիւնը պէտքէ անեմ, յուսով եմ
թէ մտագրութեամբ կրլսէք և մտքներումդ կըպահէք:

Մարդիկ երկար ժամանակ մոռացել էին այն Աստուծուն, որ
ստեղծել է այս աշխարհը. մոռացել էին իրանց և երկիրքն ու եր-
կիրը ստեղծող ճշմարիտ Աստուծուն. կռապաշտութեան խաւարի
մէջ կորել էին այնպէս, ինչպէս որդիք մոռանալով իրանց ծնողին
ու հայրենական տունը, օտարութեան մէջ կորչումեն: Արդիք որ-
քան մոռանալու լինին իրանց ծնողներին, բայց ծնողք բնաւ չեն
մոռանում և յիշումեն անգաղար իրանց զաւակներին և նոցա
համար հոգս են անում: Այսպէս էլ Աստուած իբրեւ ամենաբարի և
սիրելի Հայր, կորած մարդկութիւնը գտնելու և գէպ ի լոյսը ա-
ռաջնորդելու համար ուզարկեց աշխարհ իւր սիրելի Արդուն՝ որին
մենք Յիսուս Քրիստոս ենք անուանում. որի ծննդեան տօնը կա-
տարումենք Յունւարի 6ին փառաւոր հանդիսով: Աւրեմն պատ-
մենք թէ ո՞վ էր Մարիամ Ս. կոյսը, ինչպէս յղացաւ, ինչպէս ծնաւ
նա Յիսուս Փրկչին:

Գրեթէ 1900 տարի առաջ Հրէաստանում կար Յովակիմ անու-
նով մի մարդ, որի կնոջ անունը Աննա էր. սղքա երկուքն էլ ար-
դար, սուրբ և Էջաքիմի մարդիկ էին. բոլոր ծանօթները սիրում
ու յարգում էին նոցա. բայց այսքան սիրոյ և յարգանքի մէջ Յո-
վակիմն ու Աննան տխուր էին, որովհետեւ ծերացել էին և զա-